



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2656

1507-6

Ա. ԽԶՄԱԼՅԱՆ

216


**ՀՍԽՀ ԱՊՐԱՆՔԱԾՐՋԱՆԱՌՈՒ-  
ԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ  
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ**

1928/29 1932/33 թ.թ.

=====

**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ՅԵՐԵՎԱՆ—1930**




Ա. ԽԱՄԱԼՅԱՆ

**ՀՍԽՀ ԱՊՐԱՆՔԱԾՐՋԱՆԱՌՈՒ-  
ԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՅԻԱՅԻ  
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ**

1928/29 1932/33 թ.թ.

Խմբագրեց՝ ՅԵ. Զուբար



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ՅԵՐԵՎԱՆ-1930**

17045-  
A I  
8300



Հրատ. № 1188

ՊԵՏՅՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ԹԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեղ. № 8081(բ) Տիրութ 3000 Գումար. 134

## ԱՊՐԵՆՔԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԻՆ

Առևտրի համաձայնեցրած սեկտորի և մանավանդ  
կոոպերացիայի աճման հետևանքով, վորը հիմնովին  
փոխում է շուկայի կառուցվածքը և նրա կազմակերպ-  
ման մեթոդները, շուկայի և նրա շրջանառության դե-  
կավարման հարցերը չափազանց կարևոր նշանակու-  
թյուն են ստանում յերկրի ամբողջ ժողովրդական  
տնտեսության ճիշտ ծրագրայնացման գործում: Այս-  
տեղից ել բղխում է մի շարք հատուկ խնդիրների ի-  
րագործման տնհրաժեշտությունը, խնդիրների, վո-  
րոնք թեև առաջադրվում են ապրանքաշրջանառու-  
թյանը, բայց կարող են լուծվել միայն անմիջականո-  
րեն կապելով ժողովրդական տնտեսության զարգաց-  
ման բոլոր հարցերի հետ և պետք է որգանապես բըղ-  
խեն այդ տնտեսության վերակառուցման պլանից: Ապ-  
րանքաշրջանառության նկատմամբ այդ խնդիրները  
ձևակերպվում են և հանդում են հետևյալ հիմնական  
դրություններին. 1) Համաձայնեցում ստեղծել պա-  
հանջի և առաջարկի մեջ և կազմակերպել բնակչու-  
թյան ծրագրային մատակարարումն արդյունաբերա-  
կան ապրանքներով և գյուղատնտեսական մթերքնե-  
րով. 2) ստեղծել շուկայի աֆալիսի պայմաններ, վո-  
րոնք ապահովեն գյուղատնտեսության ապրանքայ-  
նության աճումը. 3) առևտրի մասնավոր սեկտորի  
կրճատման համաձայն ընդաբձակել համաձայնեցրած

սեկտորի ցանցը. 4) ռացիոնալացման և աժանացման լենթարկել առևտրական ապրարառի տնտեսական գործունեությունը և վերակառուցել ապրանքի առաջ- լադացման և ապրանքաշրջանառություն տեխնիկա- կան բազայի սխեմեր, համապատասխան հիմնական շինարարություն զարգացման միջոցով. 5) սահմանել գների և շուկայի առանձին ճշգրտություն միջև արժեքա- չին հարաբերականություն ճիշտ քաղաքականություն. 6) ֆինանսապես ամրացնել համայնացրած սեկտորը կապիտալի կուտակման միջոցով:

Այս հիմնական դրություններն ընդհանուր են ամբողջ Միության համար: Նույն այդ տեսակետով կառուցվել են Հայաստանի ԽՍՀ ապրանքաշրջանառու- թյան բոլոր նախագծերը 1928-29—1932-33 թ.թ. հա- մար: Առևտրի խնդիրները թե՛ ամբողջ Միությունում և թե՛ Հայաստանում պատերազմից առաջ և խոր- հըրդայնացման առաջին տարիներում հանգել են զըլ- խավորապես հետևյալին.— բերել ռուսական շուկա- ներից պատրաստի ապրանքներ և իրացնել այն լեքերի ներսում մանր-մեծավաճառի և մանրավա- ճառի միջոցով: Ապրանքաշրջանառության ուղղու- թյունն ու զարգացումը կրել են պատասխանողական բնույթ: Մինչդեռ, վերջին տարիներս մենք ունենք սպառողական ապրանքների ներմուծման վորոշ նվա- ղում, և ընդհակառակն աճել և արտադրության մի- ջոցների ու գործիքների ներմուծումը: Համաձայն դը- րան վորոշ փոփոխություն և տեղի ունենում արտա- հանություն սարգսկառաջում. տեղում վերամշակվող հումքերի տոկոսն սկսում և արագ բարձրանալ: Դրա հետևանքով տեղի չ' ունենում հումքերի արտահա-

նության կրճատում, վորը (հումուլթը) հատկացվում է տեղական տրդյունաբերության:

Այսպիսով, տրդյունաբերության ծավալման և ընդարձակման, գլուղատնտեսության ինդուստրիալացման ծավալման և նրա ապրանքային մասնայի բարձրացման հետևանքով կտրելի չե՝ հնգամյակի վերջում սպասել սպառողական բնույթ կրող մի շարք ապրանքների ներմուծման կրճատում (պատրաստի հագուստեղեն, վոտնաման, թամբակի մանուֆակտուրան, շինանյութեր) և արտադրության միջոցների ու գործիքների ներմուծման զգալի ավելացում:

Միութենական պետականի նախագծով հնգամյակի վերջում շնորհիվ Անդրկովկասի ժողովրդական տնտեսության զարգացման ու վերակառուցման նշված ծրագրի, հացի ներմուծումը կկրճատվի 25 տոկ., շաքարի ներմուծումը՝ 10 տոկ., միանգամայն կդադարի բամբակի, մանուֆակտուրայի, չուղի, կաթնամթերքի և մի քանի այլ սպառողական ապրանքների ներմուծումը: Միևնույն ժամանակ խիստ կաճի պարարտանյութերի, գլուղատնտեսական մեքենաների և գործիքների, տրակտորների ֆաբրիկա-գործարանային կահավորանքի և այլի ներմուծումը: Դրա հետ միասին՝ Անդրկովկասը կավելացնի բամբակի արտահանությունը 140 տոկ., ծխախոտի, բրդի, մրգեղենի, գինու արտահանությունը՝ 100 տոկոսով: հանդես կգան արտահանության նոր միջոցներ՝ քարածուխ. թեյ, դաբաղելու նյութ, մի շարք շինանյութեր, լեռնային արդյունաբերության արտադրանքներ և այլն:

Այսպիսով ուրեմն, ապրանքաշրջանառության բնույթի և ուղղության փոփոխման տեսակետից ավել-



լի մեծ նշանակութիւնն և ստանում Հայաստանի ԽՍՀ ապրանքային արտադրանքի աճումը հնգամյակում:

Հայաստանի ապրանքային մասսայի արժեքը հնգամյակում ներկայացնում և հետևյալ զատկերը.

(միլիոն ռուբլիներով)

|                                                 | 1927/28<br>թ. | 1932/33<br>թ. | 1932/33 թ.<br>%/ % համեմատ.<br>1927/28 թ. թ. հետ |
|-------------------------------------------------|---------------|---------------|--------------------------------------------------|
| 1. Ամբողջ արդյունաբերութ.<br>վորի թվում         | 38,3          | 155,8         | 407,8                                            |
| ա) արտադրութ. միջոցներ                          | 14,6          | 58,1          | 397,9                                            |
| բ) սպառման                                      | 23,6          | 97,7          | 413,9                                            |
| 2. Գյուղատնտեսութիւնը                           | 22,6          | 58,9          | 260,6                                            |
| Ընդամենը ամբողջ ար-<br>դյունաբ. ու գյուղատնտես. | 60,9          | 214,7         | 353,1                                            |

Կարևոր մոմենտ և հանդիսանում գյուղատնտես-  
սության նախատեսված աճումը, վորն ելապես ազ-  
դում և թե ամբողջ Անդրկովկասի և թե Հայաստա-  
նի ապրանքաշրջանառության ընդլիճի փոփոխման և  
նրա առաջադրված պահանջների վորակի բարձրացման  
վրա՝ գյուղատնտեսության ընդհանուր ապրանքայնու-  
թիւնը 1927-28 թվի 27,1 տոկոսից հնգամյակի վեր-  
ջում կհասնի 39,6 տոկոսի:

Ամբողջ գյուղատնտեսական շուկայի կազմակեր-  
պումը և նրա ընդգրկումը ապրանքային արտադրան-  
քով բավարարելու համար մի կողմից միութենա-

կան և տեղական հանրապետական արդյունաբերութ-  
յան պահանջները և մյուս կողմից՝ արտահանման  
ու սպառման կարիքները, զգալի կազմակերպչական  
ջանքեր կպահանջեն ամբողջ առևտրական ապարա-  
տից, վորպեսզի վերջինս հարմարեցվի ներքին և ար-  
տաքին շուկաների պահանջներին:

Հումուլթի համեմատական պակասության պայ-  
մաններում հատուկ նշանակություն և ստանում հու-  
մուլթային շուկայի ճիշտ կազմակերպումը. Այդ բնա-  
գավառում կենտրոնական խնդիր և հանդիսանում պայ-  
քարը հումուլթի ապրանքայնության ավելացման հա-  
մար և չերկրում չեղած հումուլթն առավելագույն եֆ-  
ֆեկտով ոգտագործելու համար՝ կրճատելով գյուղա-  
ցիական տնտեսությունների ներսում հումուլթի կլա-  
նում: Այստեղ հիմնական մոմենտներն առաջվա պես  
հանգում են հետևյալին.— 1) ուժեղացնել գյուղատն-  
տեսական կոոպերացիայի մթերումների աշխատանքը  
գյուղական շուկայում, իսկ այն շրջաններում, վորտեղ  
թույլ և կոոպերացիան, թույլատրել աշխատելու պե-  
տական մթերող կազմակերպություններին. 2) ուժե-  
ղացնել և կանոնավորել հումուլթային շուկաներին  
հատուկ ասորտիմենտով արդյունաբերական ապրանք-  
ներ մատակարարելու գործը. 3) բերած հացի և կեն-  
դանինների կերամթերքների վաճառման ժամանակ նա-  
խապատվություն տալ պակասող հումուլթը հանձնող-  
ներին՝ նայած նրանց հանձնած հումուլթի քանակին.  
4) գործադրել միջոցառումների այնպիսի սխեմա, վորն  
ապահովում և հումուլթային բազայի զարգացումը,—  
գների քաղաքականություն, կոնտրակտացիա, դրա-  
մավորման սխեմա և այլն. 5) հատուկ հսկողություն

սահմանել Առևտրի Ժողովո՞ւմատի և մթերող կազմակերպությունների կողմից, վոքալեազի արտադրողի կողմից անշեղորհն կատարվին թյն պարտավորությունները, վոր հանձն է առել նա հոսմուլթի հանձնման նկատմամբ, ցանքերի կոնարակտացիայի պայմանագրերով:

Զգալիորեն բարդ են այն խնդիրները, վոր առաջագրվում են առևտրական ապարատին պարենավորման, և մանավանդ գլուղատնտեսական մթերքների շուկայում: Զնայած նրան, վոր գլուղատնտեսությունն արդեն անցել է նախապատերազմյան մակարդակից, բայց և այնպես նրա զարգացման թափը յետ է մնում արդյունաբերության զարգացման թափից:

Այդպիսով հիմնական դժվարությունները թագնված են թե՛ մաքուր Մնդրկովկասի և թե՛ Հայաստանի պարենավորման տնտեսության սահմանափակ լինելում: Այդ հանգամանքն անհրաժեշտ է դարձնում գլուղի քանակով պարենավորման մթերքներ ներմուծել այլ շրջաններից, գլխավորապես Հյուսիսային կովկասից: Այդ դժվարություններում խոշոր դեր է խաղում նաև պարենավորման մթերքների շուկայի անկազմակերպվածությունը: Մինչև վերջերս այդ շուկան գտնվում էր կոտլերացիայի իսկական և լուրջ ուշադրությունից դուրս: Պլանային մթերոմներն ուժեղացնելու և կանոնավորելու, բանվորական բնակչության ճիշտ պլանային մատակարարման համար կոտլերացիան պետք է լայնորեն ընդգրկի գլուղատնտեսական մթերքների շուկան թե՛ քաղաքներում ու բանվորներով բնակեցրած կենտրոններում և թե՛ սպառման մանր կետերում: Գլուղատնտեսական և ապագողական կոտլերացիայի առաջ խնդիր է դրվում ընդարձակել տն-



հատական գլուղացիական տնտեսութիւններից մոծ-  
վող միջոցները, լաւնորեն կիրառելով կոնտրակտացիան,  
դարգացնելով թե կոլտնտեսութիւնների և թե կոոպե-  
րատիվ ձեռնարկութիւնների անասնապահական բա-  
ղան և կադմսկերպելով քաղաքամերձ գլուղատնտե-  
սութիւնն: Քաղաքամերձ գլուղատնտեսութիւն հարցի-  
րը պետք և առաջնակարգ հարցեր լինեն վոչ միայն  
գլուղատնտեսական կոոպերացիայի, այլև սպառողա-  
կան սիստեմի համար:

Կառավարական դիրեկտիվը պահանջում և սպա-  
ռողական կոոպերացիայից հատուկ ուշադրութիւն նը-  
վիրել քաղաքամերձ բանջարաբուծութիւն, կաթնա-  
տնտեսութիւն և թռչնաբուծութիւն վրա, ինչպես նաև  
արագ փչացող մթերքների պահեստների շինարարու-  
թիւն վրա:

Պարենավորման մթերքների պահանջի անհամա-  
պատասխանութիւնն առաջարկութիւն՝ բնորոշ լերե-  
վույթ և ամբողջ Միութիւն շուկայի հարաբերութիւն-  
ների համար: Նման դրութիւնը բացատրվում և դասա-  
կարգալին ձևափոխութիւններով, վոր տեղի ունեցան  
հեղափոխութիւն հետևանքով և կառավարչական նոր  
հասարակակարգի հաստատումով, վորոնց հետևանքով  
աճեցին ամբողջ բնակչութիւն և մանավանդ գլուղա-  
կան բնակչութիւն սպառողական պահանջները: Այս-  
տեղ հարկավոր և հիշատակել, վոր պահանջի և առա-  
ջարկի, գնորդական ֆոնդի և շուկայի համասարակըշ-  
ուութիւն հարցերը թե Անդրկովկասում և թե Հայաս-  
տանում տակավին քիչ են լուսաբանված և դեռ գտն-  
վում են ուսումնասիրութիւն շրջանում: Այդ հանգա-  
մանքը սահմանափակում և նրանց փոքր ի շատե լը:

րիվ լուսաբանման հնարավորութիւնը: Բալց և այնպէս յեղած ավյալներն Անդրկովկասի մասշտաբով թույլ են տալիս մոտավորապէս լուսաբանել հիշյալ հարցերը:

Արտադրական բազայի, ինչպէս նաև գնորդական ֆոնդի հետ անմիջական կապ ունեն ԱՍՖՈՀ սպառման չափերն ու ստրուկտուրան, վերոնք Անդրպետալանի տվյալներով հիմնական հինգ մթերքների նըկատմամբ ներկայանում են հետևյալ ձևով.

մի շնչի սպառումը 1927-28 թ. (կիլոգրամ) .

| Մթերքներ  | Ա Ս Ֆ Ո Հ |       | Խ Ս Հ Մ |       |
|-----------|-----------|-------|---------|-------|
|           | Բաղաք     | Գյուղ | Բաղաք   | Գյուղ |
| Միս       | 35,1      | 10,4  | 50,2    | 22,2  |
| Գովի յուղ | 4,5       | 3,7   | 4,95    | —     |
| Գարտֆիլ   | 37,0      | 35,0  | 67,3    | 128,2 |
| Հաց       | 214,0     | 256,2 | 175,3   | 221,0 |
| Ձու       | 81,0      | 60,0  | 69,8    | 49,5  |

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, վոր սպառման պրոցեսն Անդրկովկասում դեռ չի ստացել ավարտված արտահայտութիւն և անմիջական կապ ունի պարենավորման յեղած միջոցների և գյուղատնտեսութեան ապրանքայնութեան ընդհանուր պայմանների հետ:

Գյուղատնտեսական մթերքների տպրանքայնութեան զարգացումը ՀՍՍՀ վերջին տարիներս ներկայացնում է հետևյալ պատկերը (տոկոսներով).

| Մ Ր Ե Ր Ք Ն Ե Ր                     | 1925-26 թ. | 1926-27 թ. | 1927-28 թ. |
|-------------------------------------|------------|------------|------------|
| 1. Միս ու ճարպ . . . . .            | 50,6       | 51,5       | 53,8       |
| 2. Թռչունի միս . . . . .            | 8,5        | 10,0       | 9,4        |
| 3. Ձուլ . . . . .                   | 20,5       | 23,3       | 21,0       |
| 4. Կաթ ու կաթնամթերք . . . . .      | 24,4       | 26,8       | 29,4       |
| 5. Բանջարանոց ու բոստան . . . . .   | 32,4       | 34,4       | 33,9       |
| 6. Կարտոֆիլ . . . . .               | 26,1       | 16,3       | 24,8       |
| 7. Այգիներ ու խաղողի այգի . . . . . | 45,9       | 48,2       | 56,8       |
| 8. Հացահատիկներ . . . . .           | —          | —          | 0,7        |

Ինչպես յերևում ե վերոհիշյալ տվյալներից գյուղատնտեսական մթերքները տեղերում զգալի չափով կլանվում են. այս յերևույթը բացի պարենավորման մթերքների շուկայի, մթերման ապարատի անկազմակերպվածութունից, բացատրվում ե նաև այլ պատճառներով. այն ե՝ հաղորդակցության ճանապարհների, փոխադրական միջոցների բացակայությամբ, մթերման շրջանների հեռավորությամբ քաղաքային շուկաներից ու լերկաթուղային ճանապարհներից, թե քաղաքներում և թե բանվորական կենտրոններում ու մթերման վալրերում պահպանման, տեսակների բաժանման և ծրարման պահեստների բացակայությամբ և այլն:

Այն քաղաքականութիւնը, վորը խորհրդային իշ-

խանությունը վարում և գլուղում, — կալիկաթիվացման վճռական կուրսը, խորանտեռությունների շինարարութ-  
յունն ու արտադրական կոտլերացիայի շարժացումը հիմնովին ջախջախում և այն արգելքը, վերը խոչըն-  
դոտ և հանդիսանում գլուղատնտեսության արտադրա-  
կան ուժերի զարգացմանը, բարձրացնում և գլուղա-  
տնտեսական միջերջների ապրանքային մասսան և ե-  
լապես փոխում և գլուղատնտեսական միջերջների շու-  
կայի գոյությունն ունեցող ստրուկտուրան: Հայաստանի  
գլուղատնտեսության զարգացման հնգամյա պլանով  
ընդհանուր և ապրանքային արտադրանքի աճումը մի-  
ջին բերքի պայմաններում (հազար տոննով) ներկա-  
յացնում և հետևյալ պատկերը.

|                                 | 1927-28 թ.             |            |                 | 1932-33 թ.             |            |                 |
|---------------------------------|------------------------|------------|-----------------|------------------------|------------|-----------------|
|                                 | Ընդհանուր<br>արտադրանք | Ապրանքային | Ապրանքային<br>% | Ընդհանուր<br>Արտադրանք | Ապրանքային | Ապրանքային<br>% |
| 1. Յուղ և ճարպ                  | 12,5                   | 6,7        | 53,8            | 21,2                   | 10,6       | 50,0            |
| 2. Թռչունի միս                  | 1,8                    | 0,1        | 9,4             | 3,3                    | 0,8        | 25,0            |
| 3. Զուռ (միլիոն հատ)            | 67,0                   | 14,1       | 21,0            | 151,0                  | 45,3       | 30,0            |
| 4. Կաթ և կաթնամթերք             | 136,1                  | 40,0       | 29,4            | 272,3                  | 136,2      | 50,0            |
| 5. Բանջարանոցներ և<br>բոստաններ | 48,8                   | 16,4       | 33,6            | 111,5                  | 55,8       | 50,0            |
| 6. Կարտոֆիլ                     | 76,3                   | 17,4       | 22,8            | 207,2                  | 103,6      | 50,0            |
| 7. Այգիներ                      | 30,0                   | 12,1       | 40,2            | 55,3                   | 33,2       | 60,0            |
| 8. Խաղողի տղիներ                | 43,1                   | 28,9       | 67,0            | 81,0                   | 64,8       | 80,0            |



ինչպէս լերեւում ե վերոհիշյալ ամլալներէց հըն-  
դամյա արանը նախատեսում ե Հայաստանի արհնա-  
վորման միջոցներէ զգալի բարձրացում ե հնարավո-  
րութիւն ե տալիս հուլա ունենալու բնակչության  
սննդի զգալի բարելավման մասին: Այլաւաւաւրջանա-  
ւորության պլանով պարենավորման հինգ հիմնական  
առարկաների մի շնչի միջին նորման 1932—33 թ. ներ-  
կայացնում ե հետեւյալ ձևով (կիւրգրամներով).

|                         | Բաղաք | Գլուգ |
|-------------------------|-------|-------|
| Հաց (հացահատիկով) . . . | 230,9 | 290,2 |
| Միս . . . . .           | 40,0  | 14,8  |
| Յուղ կովի . . . . .     | 6,0   | 4,5   |
| Կարտոֆիլ . . . . .      | 40,0  | 60,0  |
| Ձու . . . . .           | 120,0 | 80,0  |

Մսի, յուղի ե ձվի սպառման զգալի բարձրա-  
ցումը հնարավորութիւն ե տալիս պահպանելու հա-  
ցի սպառումը 1926—27 թվի մակարդակի վրա:

Հայաստանի պարենավորման մթերքների բարձ-  
րացման այսպիսի նախագծով, մի շարք տարանքնե-  
րի ներմուծումը իսպառ վերանում ե կամ զգալիորեն  
կրճատվում: Հետագայում կպահանջվի յուղի մասնակի  
ներմուծումը, վորովհետեւ Հայաստանի կաթնային  
արտադրանքը գլխավորապէս վերամշակվում ե շվեյ-  
ցարական պանրի, վորն արտահանութիւն առարկա  
յե ծառայում, տեղի կունենա նաեւ հացի ներմուծում,  
վորովհետեւ Հայաստանը, վորպէս տեխնիկական մշա-  
կույթների շրջան, գլուղատնտեսութիւն բնույթով  
սահմանափակ հնարավորութիւն ունի ընդարձակելու  
հացահատիկային տնտեսութիւնը:

Այստեղ հարկավոր է հիշատակել, Վոր միջանի պարենավորման միջերջների պակտսը գետք ե անխուսափելիորեն նվազի, յեթե հաշվի առնենք քաղաքային մերձ տնտեսութեան արտադրանքը, Վորը չի արտահայտված գլուղատնտեսութեան պլաններում: Վերջինս զարգացումն ապրանքաշրջանառութեան պլանով ծրարված է լայն չափերով:

### ԱՌՆԱՎՈՐՈՒՄԻ ԶԵՆՈՐԴԱՆՆԵՐԸ

Արդեն իսկ հնգամյակի սկզբում առևտրա-միջնորդական շրջանառութեան ստրուկտուրան յենթարկվել է վճռական փոփոխման: Մասնավոր առևտրի տեսակարար կշիռը մանրածախս ապրանքա-շրջանառութեան մեջ կազմել է 1927/28 թվին 39,3 տոկոս ընդդեմ 1925/26 թվի 47,1 տոկոսի: Միևնույն ժամանակ խիստ նվազել է մասնավոր մեծաքանակ վաճառքը 1,2 միլիոն ռուբլու 1927—28 թվին ընդդեմ 1925—26 թվի 2,7 միլիոն ռուբլու: Քաղաքի ու գլուղի միջև շուկայի կապերի ճնշող մեծամասնութունը գտնվել է համայնացրած սեկտորի ձեռքում, մասնավոր կապիտալի ձեռքում մնացել է միայն տեղական շրջանառութեան սահմանափակ շրջանը, համարյա բացառապես մանրավաճառքի նկատմամբ և միայն արագ փչացող միջերջների, գլխավորապես բանջարեղենի ու մրգեղենի, մասնավորապես մսի և տնայնագործական արտադրանքի մատակարարման մեջ դեռ ներկայումս էլ մասնավոր կապիտալը նշանավոր դեր է խաղում:

Առևտրա-միջնորդական շրջանառութեան զարգացումը գտնվելու յե յերեք հիմնական մոմենտների ազդեցութեան տակ, ապրանքային մասսայի զգալի

աճումը, սպառման աճումը, վորպես հետևանք բնակչության գնորդական ֆոնդի, կուլտուրական ու բարեկեցութեան բարձրացման, արդյունաբերութեան ընդարձակման հետևանքով և ապրանքալին սովի մեղմացումը ամբողջ Միութեան մէջ: Նախնական հաշիվներով ամբողջ գնորդական ֆոնդը հնգամյակի վերջում կաա մոտ 50 տոկոս աճում:

Բոլոր հաշիվների հետևանքով մենք Հայաստանում 1927/28—1932/33 թ. կունենանք առևտրամիջնորդական շրջանառութեան զարգացման հետեյալ պատկերը.

(Միլիոն ռուբլիներով)

|                           | 1927—<br>—28 թ. | 1932—<br>—33 թ. | 1932—<br>—33 թ.<br>%<br>1927—<br>—28 թ.<br>նկատմ. |
|---------------------------|-----------------|-----------------|---------------------------------------------------|
| I Ամբողջ օրջանառութիւնը   | 96,8            | 238,0           | 245,9                                             |
| ա) Պետական . . . . .      | 19,7            | 35,0            | 177,7                                             |
| բ) Կոոպերատիվ . . . . .   | 52,7            | 187,0           | 254,8                                             |
| Ընդամենը համայն . . . . . | 72,4            | 22,2            | 206,6                                             |
| դ) Մասնավոր . . . . .     | 24,4            | 16,0            | 65,6                                              |
| II Միծափտնակ վաճառք . .   | 37,7            | 132,0           | 350,1                                             |
| ա) Պետական . . . . .      | 14,6            | 32,0            | 219,2                                             |
| բ) Կոոպերատիվ . . . . .   | 21,9            | 99,0            | 452,0                                             |
| Ընդամենը համայն. . . . .  | 36,5            | 131,0           | 358,9                                             |
| դ) Մասնավոր . . . . .     | 1,2             | 1,0             | 83,3                                              |
| III Մանրավաճառք . . . . . | 59,1            | 106,0           | 179,3                                             |
| ա) Պետական . . . . .      | 5,1             | 3,0             | 58,3                                              |
| բ) Կոոպերատիվ . . . . .   | 30,8            | 88,0            | 285,7                                             |
| Ընդամենը համայն. . . . .  | 35,9            | 91,0            | 253,5                                             |
| դ) Մասնավոր . . . . .     | 23,2            | 15,0            | 64,6                                              |

Առաջիկա հնգամյակում ապրանքաշրջանառության կազմակերպման խնդիրն ամբողջովին ընկնում է համալսնացրած սեկտորի վրա, գլխավորապես կոոպերացիայի վրա:

Առանձին սխտեմների բեռնավորումն (ըստ իրենց զուտ շրջանառության) պետք է աճի հետևյալ ձևով. (°/o-ներով)

|                      |   |       |
|----------------------|---|-------|
| Պետառևտուրը          | + | 77,7  |
| Կոոպերացիան          | + | 154,8 |
| <hr/>                |   |       |
| Ընդամ. համայն. սեկտ. | + | 106,6 |
| Մասնավոր առևտուրը    | — | 34,4  |

Վերոհիշյալ թվերը վկայում են այն հսկայական խնդիրների մասին, վոր առաջադրվում են կոոպերատիվ ապարարտին այն ե՝ ավելացնել կոոպերացիայի ապրանքային բեռնավորումը մեկ և կես անգամ: Ջարգացման նման թափը հսկայական լարում է պահանջում կոոպերատիվ ապարարտի և կոոպերատիվ շարժումով ընդգրկված լայն մասսաների կողմից:

Ապրանքաշրջանառության անալիզը թե՛ ամբողջ Միության մեջ և թե՛ Հայաստանում ցույց է տալիս, վոր ապրանքաշրջանառությունից անշեղորեն վտարվում է մասնավոր կապիտալը և փոխարինվում է այն համալսնացրած սեկտորով ուժեղանում են ապրանքային մասսաների կենտրոնացման պրոցեսսներն ըստ առանձին սխտեմների՝ նայած նրանց կոչման (արտադրություն, սպառում, արտահանություն): Այդ պրոցեսսների ուժեղացմանն ու ամրացմանը պետք է ծառայի պլանային միջոցառումների ամբողջ սխտեմը:

1928/29 թվի նախնական արդյունքային տվյալներն ու 1929/30 թվի վերահսկիչ թվերը ցույց են




տալիս, վոր համայնացրած սեկտորի առևտրական միջ-  
նորդական շրջանառության աճման թափն ու դրա  
հետևանքով մասնավորի տեսակարար կշռի նվազումն  
ավելի արագ և ընթանում, քան ահի նախատեսված  
եր հնդամյա պլանով:

Հնդամյա պլանով համայնացրած սեկտորի տե-  
սակարար կշիռը մեծաքանակ շրջանառության մեջ  
նախատեսված եր 99,3 տոկոս, իսկ մասնավոր սեկ-  
տորինը՝ 0,7 տոկոս, մինչդեռ 1929/30 թվի վերահըս-  
կիչ թվերով համայնացրած սեկտորի տեսակարար  
կշիռն է 99,4 տոկոս, իսկ մասնավորինը՝ 0,6 %:

Քանակական ալդ թափերը հսկայական պատաս-  
խանատվություն են դնում շուկայի կազմակերպման  
համար համայնացրած առևտրական շրջանառության  
վրա: Արդեն իսկ շուկայի ընդգրկման չափը, վոր  
տեղի ունի 1929/30 թվի վերահսկիչ թվերով, համար-  
յա մենաշնորհալիս դրության մեջ են դնում համայ-  
նացրած առևտուրը: Խնդիր ունենալով համայնացրած  
առևտրի և մանավանդ կոոպերացիայի հետագա զար-  
գացումը, անհրաժեշտ է միաժամանակ կիրառել մի-  
ջոցառումների լայն սխառեմ՝ ապրանքաշրջանառու  
ապարտի վերակառուցման համար:

Այդ հաշվով ել կազմված է շրջանառություննե-  
րի բաշխման ամբողջ նախագիծն ըստ առևտրական  
առանձին սխառեմների ու սեկտորների, վորի հետևան-  
քով համայնացման պրոցեսսը ներկայանում է հետև-  
յալ ձևով (0%-ներով):



**Յ.ՈՒԲԵՐԵԱ-ՄԻՋՃՈՐՊԱԿԱՆ ՕՐՀԱՆՈՒՐԱՊՈԼՃՁ**  
(տաճոսներն առ դոլմար)

|                                                              | 1927—<br>—28թ. | 1928—<br>—29թ. | 1929—<br>—30թ. | 1932—<br>—33թ. |
|--------------------------------------------------------------|----------------|----------------|----------------|----------------|
| <b>I Ամբողջ առևտրա-միջն. շրջանա-</b><br><b>ռուք. . . . .</b> | 100,0          | 100,0          | 100,0          | 100,0          |
| ա) Պետական . . . . .                                         | 20,4           | 23,8           | 22,9           | 14,7           |
| բ) Կոոպերատիվ . . . . .                                      | 54,5           | 62,6           | 67,3           | 78,5           |
| Ընդամ. համայնաց. . . . .                                     | 74,9           | 86,4           | 90,2           | 93,2           |
| գ) Մասնավոր . . . . .                                        | 25,1           | 13,6           | 9,8            | 6,8            |
| <b>II Մեծաքանակ շրջանառ.</b> . . . .                         | 100,0          | 100,0          | 100,0          | 100,0          |
| ա) Պետական . . . . .                                         | 38,7           | 38,0           | 34,6           | 24,3           |
| բ) Կոոպերատիվ . . . . .                                      | 58,1           | 60,9           | 64,8           | 75,0           |
| Ընդամենը համայն. . . . .                                     | 96,8           | 98,9           | 99,4           | 99,7           |
| գ) Մասնավոր . . . . .                                        | 2,2            | 1,1            | 0,6            | 0,7            |
| <b>III Մանրավաճ. շրջանառ.</b> . . . .                        | 100,0          | 100,0          | 100,0          | 100,0          |
| ա) Պետական . . . . .                                         | 8,6            | 8,4            | 9,0            | 2,8            |
| բ) Կոոպերատիվ . . . . .                                      | 52,1           | 64,5           | 70,2           | 83,1           |
| Ընդամենը համայն. . . . .                                     | 60,7           | 72,9           | 79,2           | 85,9           |
| գ) Մասնավոր . . . . .                                        | 39,3           | 27,1           | 20,8           | 14,1           |

Յերկրում ապրանքաշրջանառության զարգացման հետ միասին մեծավաճառի ու մանրավաճառիչափերը ձգտում են հաստատել վորոշ աշխարհի հարաբերականություն, վորն ավելի համապատասխաներ շուկայի տնտեսության ավելի զարգացած ձևին։ Մեծաքանակ շրջանառությունը 1928/29 թվին տալիս է 93,4 տոկոսի աճում նախորդ տարվա համեմատությունով, իսկ 1929/30 թվին՝ 30,3 տոկոս։ մինչդեռ մանրավաճառ շրջանառությունը նույն թվին աճում է

34,8 տոկոսով համեմատած նախորդ տարվա հետ և 1929/30 թվին՝ 28,4 տոկոս: Այդ բացատրվում է նրանով, վոր ծավալվող շինարարության, զարգացող ինդուստրիայի և գյուղատնտեսության ապրանքալին ճյուղերի վերելքն առաջացնում են գործարքները ամրացում և ալգաիսով իսկ բարձրացնում են մեծաքանակ վաճառքի դերն ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ:

### ՄԱՆԵՐԱՎԱՃԱՌ ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏՆՆՏՐ

Ապրանքաշրջանառության կազմակերպման ամենաբարդ պրոբլեմներից մեկը հնդամյա պլանում հանդիսանում է շուկայի առևտրի կազմակերպման պրոբլեմը:

Մասնավոր առևտրական ցանցի խիստ կրճատումը և համայնացված սեկտորի առևտրական տեխնիկայի ցածր մակարդակը, բնակչության հարածուն պահանջների պայմաններում այդ պրոբլեմը դարձնում են ավելի սուր. վերջինս լայն նշանակություն է ստանում վոչ միայն սպառողին սպասարկելու հատկությունների տեսակետից, այլ և վորպես ժողովրդատնտեսական մի գործոն, վորն ազդեցություն ունի և՛ բանվորների աշխատանքի արտադրողականության և՛ գյուղատնտեսության ու նրա ապրանքայնության աճման վրա:

Հայաստանի առևտրական ցանցի զարգացման գլխամիկան վերջին յերկու տարվա ընթացքում ներկայացնում է հետևյալ պատկերը.

## (Անդրադասականի տվյալներով \*)

|                      | 1926-27 թ. |      |        | 1927-28 թ. |      |        |
|----------------------|------------|------|--------|------------|------|--------|
|                      | Դրամ       | Գրամ | Ընդամ. | Դրամ       | Գրամ | Ընդամ. |
| Պետական . . . . .    | 71         | 16   | 90     | 66         | 23   | 89     |
| Կոոպերատիվ . . . . . | 182        | 275  | 457    | 194        | 294  | 488    |
| Մասնավոր . . . . .   | 1872       | 1818 | 3690   | 1768       | 1486 | 3254   |
| Ընդամենը . . . . .   | 2128       | 2109 | 4237   | 2028       | 1803 | 3831   |

Այդպիսով մի տարվա ընթացքում մենք ունենք 406 կետով ցանցի կրճատում: Մասնավոր մանրավաճառ ցանցը կրճատվել է 436 կետով, միևնույն ժամանակ կոոպերատիվ ցանցն աճել է միայն 31 կետով: Սկսած 1928 թվից այդ կրճատումը կատարվում է ավելի արագ, քան այն նախատեսված է հնվամյա պլանով:

Հայաստանի մանրավաճառ ցանցը հիմնականում

(Անդրադասականի տվյալներով)

Հ Ս Խ Հ

|                       | Դրամ | Գրամ | Ընդամեն |
|-----------------------|------|------|---------|
| Պետականություն        |      |      |         |
| 1927/28 թիվ . . . . . | 66   | 23   | 89      |
| 1932/33 թվի . . . . . | 66   | —    | 66      |

\* ) Հարկավոր է շեշտել, Վորսպրանջաշրջանառության հընդամյա պլանը կազմելիս Հայաստանի Կենտրինվարը չունի պատրաստի մշակված նյութեր առևտրական կետերի քանակի մասին, ուստի Հայաստանի Պետպլանը ստիպված յեղավ ոգտվել Անդրադասականի տվյալներով, այն պայմանով, վորպեսզի հետագայում այդ տվյալների մեջ մոցնի անհրաժեշտ ուղղումները:



## Կոոպերացիա

|                   |     |     |     |
|-------------------|-----|-----|-----|
| 1927/28 թիվ . . . | 194 | 204 | 428 |
| 1932/33 թիվ . . . | 325 | 479 | 514 |

## Մասնավոր

|                   |      |      |      |
|-------------------|------|------|------|
| 1927/28 թիվ . . . | 1768 | 1486 | 3254 |
| 1932/32 թիվ . . . | 1630 | 1350 | 2980 |

## Ընդամենը

|                   |      |      |      |
|-------------------|------|------|------|
| 1927/28 թիվ . . . | 2028 | 1803 | 3831 |
| 1932/33 թիվ . . . | 2031 | 1329 | 3860 |

Մանրավաճառ ցանցը Հայաստանում Կենտրին-վարի վերջին տվյալներով առ 1928/29 թիվը, համեմատած հնգամյա պլանի տվյալների հետ տալիս է խիստ տատանում կոոպերատիվ ցանցի ավելացման և մասնավոր առևտրի ցանցի խիստ իջեցման տեսակետից:

Հնգամյա պլանով առ 1928/29 թիվը մասնավոր առևտրի ցանցում նշված է 3,254 կետ, մինչդեռ Հայաստանի Կենտրինվարի վերջին հաշիվներով առ 1-ն ապրիլի 1929 թիվը մասնավոր ցանցը կազմել է 1,208 կետ, իսկ յեթե հաշվենք առ 1-ն հոկտեմբեր 1929 թ. վերցրած արտոնագրերով (պատենտներով), ապա հավասար կլինի մոտավորապես 1558 կետի: Այդպիսով մասնավոր ցանցի կրճատումը ընթանում է ավելի արագ, քան յենթադրվում էր հնգամյա պլանով:

Մասնավոր ցանցի կրճատման պրոցեսի անսկզբից պարզվում է, վոր կրճատումը տեղի յե ունե-

նում առաջին հերթին իհաշիվ խոշոր ու միջակ առևտրական ձեռնարկությունների, այն ժամանակ չերբ մասնավորը փոքրիշատե կայուն կիրպով պահպանում է իր դիրքերը շարժական և մանր մանրավաճառ առևտրում: Նման դրությունը վկայում է այն մասին վոր մասնավոր կապիտալը մանրանալով տեղափոխվում է դեպի քաղաքի ծալրամասերն ու գյուղը:

Այս ամենը վկայում է նաև այն մասին, վոր անհրաժեշտ է ավելացնել մանր խանութների քանակն ապրանքների այնպիսի տեսակներով, վոր համապատասխանեն գյուղացիական բնակչության առորյա պահանջներին, այդ խանութները պետք է ըստ հնարավորին մոտ գտնվեն գյուղական բնակչությանը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն խանութների ցանցի քանակական կարգացման վրա, վորոնք սպասարկում են քողաքային բնակչության առորյա պահանջը: Եվսլալ դեպքում կենսամթերքների խանութների վրա: Այստեղ մեծ խանութների հետ միասին պահանջվում է լայն չափով դարգացնել և մանր կրպակները: Դրա հետ միասին, վորպես առանձին պրորլեմ, ծառանում է շուկայի առևտրի վերակադմակերպումը, անցնելով պապենական ասիական «բազարներից» ու շուկաներից դեպի առողջտպահիկ բարեփիճակ և ծածկված շուկաներին:

Անցնելով առևտրական ցանցի խտության ցուցանիշներին, մենք նկատում ենք հետևյալ պատկերը:

| Ցուցանիշներ                          | 1927/28 թ. | 1928/29 թ. | 1930/33 թ. |
|--------------------------------------|------------|------------|------------|
| 1. 100 կիլոմետ. վրա<br>ընկնող կետեր  | 95,3       | 93,0       | 128,6      |
| 2. Քանի հողուն է ընկած<br>1 կետ.     | 232        | 252        | 254        |
| ա) Քաղաքում.                         | 84         | 96         | 105        |
| բ) Գյուղում.                         | 398        | 425        | 442        |
| 3. 10 հազ. հողուն ըն-<br>կնում է կետ | 43         | 40         | 38         |
| ա) Քաղաքում                          | 119        | 101        | 96         |
| բ) Գյուղում                          | 25         | 24         | 23         |

Առևտրական ցանցի խտության հաշվառքը կատարված է հնդամյա պլանի տվյալների հիման վրա, բայց ինչպես վերևում մենք տեսանք 1928/29 թ. հաշվետու տվյալներով և 1929/30 թվի վերահսկիչ թվերով մասնավոր առևտրական ցանցի կրճատումն ընթանում է ավելի արագ, քան թե այդ նշված եր հնդամյակով, վորի հետևանքով պարզ է, վոր ավելի կշատանա մի կետին ընկնող շնչերի քանակը:

Գյուղատնտեսության ապրանքալուծյան առ-

ման ու գյուղացիական բնակչության բարեկեցության բարձրացման գուզընթաց պետք է ավելանան նրա պահանջները սպասարկող ցանցի նկատմամբ, մինչդեռ գյուղական ցանցի վիճակը պարզապես անբավարար է:

Մանրավաճառ առևտրի զարգացումն արտասահմանում վերջին տարիներս առաջ է բերել շատ հետաքրքիր և մեր շինարարության համար խրատական նորություններ:

Վերջին տարիներս արտասահմանում առանձնապես զարգացում են ստացել վոչ թե ունիվերսալ խանութները, այլ բազմախանութ ձեռնարկությունների սոսկալի արագությամբ զարգացող նոր տիպերը: Դրանք իրենց աշխատանքը կառուցում են վոչ թե ձեռնարկության կենտրոնացման հիման վրա, այլ վաճառքի սովորական տիպարի մանր ու միջակ ձեռնարկությունների կենտրոնացված վարչության վրա: Կապիտալիստական մանրավաճառ առևտրի զարգացման հիմնական տենդենցն է իրագործել խոշոր ձեռնարկության ձևերով մանր վաճառքների սկզբունքը, ցանցն սպառողին մոտեցնելու սկզբունքը (մսի, բանջարեղենի, կաթնամթերքի և այլն): Մթերքների պահեստիության պայմաններում սպառողներին—մանրավաճառ հայթայթման ռացիոնալիզացիային հարկավոր է բացառիկ ուշադրություն նվիրել:

Կենտրոնացած կոոպերատիվ տնտեսության գոյությունը մեզանում հեշտացնում է կենտրոնացված վարչության սկզբունքներով մանրավաճառ ցանցի շինարարությունը այնպիսի ձեռնարկությունների տիպերով: Վերոնք համապատասխանեն առանձին ապրանք



ների պահանջի և դնման պայմաններին: Յեթե դաւղատնտեսական ցանցի նկատմամբ հնդամյակի շրջանում դժվար է խոսել նրա մասնագիտացման մասին, ապա քաղաքների նկատմամբ ակտիվացում է լինի ցանցի ռացիոնալացման հիմնական խնդիրներից մեկը: Ի տարբերումն արտասահմանյան պրակտիկայից, վերոհղ բազմախանութը սովորաբար մասնագիտական ձեռնարկության տիպար է, թեև ապրանքների բազմազան տեսակներով, մեր կոոպերատիվ բազմախանութը ունիվերսալ ձեռնարկության տիպար է: Այդ զգալիորեն դժվարացնում ու բարդացնում է ձեռնարկության ղեկավարութունը և վատթարացնում է նրա աշխատանքը: Մեր տիպարի ունիվերսալ խանութներին հետ միասին անհրաժեշտ է զարգացնել նաև մասնագիտական խանութները (մանուֆակտուրային, տնային տնտեսության և այլն): Հատուկ համառությամբ դըրվում է արագ փչացող մթերքների խանութների հարցը:

## ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ՎՍՊԻՏԱԼԻ) ՅԻՆԱ- ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆյուդալտնտեսության ինդուստրացման բնագավառում այն նշանավոր խնդիրները, վոր ընկնում են գլխավորապես առևտրի և կոոպերացիայի վրա, խանութային ցանցի ընդարձակման և առևտրի նյութական-տեխնիկական բազայի ամրացման անհրաժեշտությունը՝ համայնացրած սեկտորի ապրանքային բեռնավորման հետագա զգալի ուժեղացման պայմաններում, առաջիկա հնդամյակում ֆինանսավորումն ու

կապիտալ շինարարութիւնը դասոււմ են բաժնեկանա-  
չափ բարդ ու պատասխանատու հարցերի շարքում:

Պլանի մեջ մտցրված և ամբողջ շինարարութիւնը  
վոր իրագործվում և կոռպորացիայի (բացի բնակա-  
կարանային) և առևտրական ձեռնարկութիւնների  
բոլոր տեսակներով: Պլանն, այդպիսով, իր մեջ պարու-  
նակում և և գյուղատնտեսական միջոցների նախնա-  
կան մշակման ձեռնարկութիւնների բոլոր ներդրում-  
ները և իր այդ մասում համաձայնեցված և գյուղա-  
տնտեսութիւն բաժնում բերված բոլոր հաշվառքների  
հետ:

Հնգամյակի համար անհրաժեշտ միջոցների  
ընդհանուր չափը պլանով սահմանված և 14,868 հազ.  
ռուբլի: Սակայն այստեղ անհրաժեշտ և նշիլ, վոր  
համաձայն գյուղատնտեսութիւն ինդուստրացման  
պլանի գյուղատնտեսական վարկի նախահաշվով շի-  
նարարութիւնը հատկացվող միջոցները հանելուց  
հետո, Հայաստանի գուտ առևտրական շինարարու-  
թիւնը վորոշվում և 6,368 հազար ռուբլի: Այդ գու-  
մարը բաշխվում և հետևյալ ձևով:

|                                       |                |
|---------------------------------------|----------------|
| 1. Սառցարաններ                        | 673 հազ. ռուբ. |
| 2. Հացի գործարաններ                   | 620 » »        |
| 3. Խանութային կոռպ. շինար.            | 600 » »        |
| 4. Պահեստային շինարարութիւն           | 400 » »        |
| 5. Անդրպետառի պահեստներ               | 200 » »        |
| 6. Նավթի պահեստների                   | 200 » »        |
| 7. Լաթի ու մակուկաւ րալի<br>պահեստներ | 30 » »         |
| 8. Ժողանուէր                          | 300 » »        |

|                             |      |   |   |
|-----------------------------|------|---|---|
| 9. Առևտրա-արդյունաբերական   |      |   |   |
| ձեռնարկ, ծածկված շուկա-     |      |   |   |
| ների, պահեստների և այլ      |      |   |   |
| շինարարություն              | 1940 | » | » |
| 10. Ձկնորսություն և ձկնարդ. | 150  | » | » |
| 11. Մորթեղեն                | 150  | » | » |
| 12. Մսի ու կաթնամթերքի քա-  |      |   |   |
| ղաքամերձ տնտեսություն.      |      |   |   |
| 13. Ավտոտարանսպորտ          | 600  | » | » |
| 14. Պահեստի միջոցներ        | 400  | » | » |

---

Ընդամենը      6,363 հազ. ուրբ.

Այդպիսով առևտրական կապիտալ շինարարության անվան տակ պետք է հասկանալ այն ամբողջ շինարարությունը, վորն ուղղված է անմիջորեն ապրանքաշրջանառության և առևտրական ձեռնարկների կտրիքների սպասարկմանը: Այդ շինարարությունը թեև ձևականորեն ծառայում է միայն առևտրի նպատակներին, բայց իրոք սերտորեն կապված է յերկրի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետ և իր ներքին բովանդակությամբ պետք է ծառայե ամբողջ տնտեսության վերակառուցման նպատակներին:

Առևտրական շինարարությունը, նայած այն խնդիրներին, վորոնց նա պետք է ծառայի, կարելի բաշխել հետևյալ խմբակներին:

1. Զուտ պահեստային տնտեսություն—սառցարաններ, զանազան պահեստներ քնդհանուր ոգտագործման համար և այլն:

2. Սպառողական շուկայի սպասարկման շինարարութիւն—հացի գործարաններ, խանութներ, հասարակական սննդամսակներ քաղցրեղենի, յերշիկի գործարաններ և այլն:

3. Արդյունաբերական ձեռնարկութիւններ և մթերքների նախնական մշակման, պահպանման ու վտման ձեռնարկութիւններ:

4. Արտահանութեան (եքսպորտային) շինարարութիւն: Պետք է ասել, վոր շինարարութեան այդ տեսակն ամեն անգամ յենթակա չե ճիշտ վորոշման, վորովհետև հաճախ միևնույն ձեռնարկութիւնը կոչված է ինում սպասարկելու թե արտահանութիւնը և թե ներքին շուկան:

Հայաստանի ապրանքաշրջանառութեան բացառիկ նյութական ու տեխնիկական հետամնացութիւնը պահանջում է արագընթաց ձևով իրագործել առևտրական շինարարութիւնը:

Հայաստանի ամբողջ առևտրական շինարարութիւնը, ներառյալ նաև նախընթաց տարիների սառցարանների շինարարութիւնը, արտահայտվում է հետևյալ ձևով (հազար ուրլիներով):

25/26 թ.    26/27 թ.    27/28 թ.

Առևտրական շինարարութիւն.

|           |       |       |       |
|-----------|-------|-------|-------|
| բարութիւն | 250,0 | 350,0 | 837,0 |
|-----------|-------|-------|-------|

Սակայն բերելով հաշվետու տվյալների այդ թվերը, անհրաժեշտ է նշել, վոր նրանք բնութագրում են կարող լինել, վորպէս զուտ առևտրական շինարարութեան գումարներ, վորովհետև ներկայացնում են գյուղատնտեսութեան ինդուստրիալացման պլանով



բոլոր ներգրուումների հանրագումարները, իսկ ջոկել անմիջորեն ապրանքաշրջանառության հետ կապված շինարարության որակները նյութերի գրությամբ և նյութերի հաշվետու ավյալներով հնարավոր է: Մինչև 1928 թիվը առևտրական շինարարության կապիտալ ներգրուումների գումարը, ներառյալ նաև սառցարանների հատկացրածը, այնքան չնչին է, վոր չի կարող ելական ազդեցություն ունենալ շուկայի կազմակերպման վրա: Այդ յերևույթի հիմնական պատճառը թաղընված է կոոպերացիայի ֆինանսական թուլության և բոլորակապի միջոցների անբավարար հատկացումների մեջ, ալդ պատճառով արդեն իսկ 1928/29 թվին անհրաժեշտ է դառնում բոլորակապին կարգով առևտրական շինարարության ֆինանսավորման ուժեղացումը:

## Կ Ո Ո Պ Ե Ր Ա Ց Ի Ա

